



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«ԱՐՄԱՎԻՍ» ԿՈՄՊԱՆԻԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ

*Մ. Մուսսան*  
Մ. ՄՈՒՍՍԱՆ  
«17» 11/2017թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 102

**Ձեռնարկողը՝**

«Հայնախագիծ» ԲԲԸ  
Ք. Երևան, Չարենցի 1

**Գործունեությունը՝**

Էջմիածին քաղաքը, որպես համայն հայության հոգևոր և խոշոր զբոսաշրջային կենտրոն աշխարհին հավուր պատշաճի ներկայացնելու նպատակով նախատեսվող կենտրոնական փողոցների վերակառուցման, տարածքների կազմակերպման, օղակաձև տրանսպորտային երթուղու հատվածային վերակառուցման լրակառուցման, արդիականացման, պատմաճարտարապետական միջավայրի վերականգնման, դեպի եկեղեցիներ տանող փողոցների, ճանապարհների հիմնանորոգման, էջմիածին քաղաքի մուտքի նախագծման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն  
«Արմավիսի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

*Վ. Սահակյան*

Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 102

«17» 11 2017թ.

Էջմիածին քաղաքը, որպես համայն հայության հոգևոր և խոշոր զբոսաշրջային կենտրոն աշխարհին հավուր պատշաճի ներկայացնելու նպատակով նախատեսվող կենտրոնական փողոցների վերակառուցման, տարածքների կազմակերպման, օղակաձև տրանսպորտային երթուղու հատվածային վերակառուցման և լրակառուցման, արդիականացման, պատմաճարտարապետական միջավայրի վերականգնման, դեպի եկեղեցիներ տանող փողոցների, ճանապարհների հիմնանորոգման, էջմիածին քաղաքի մուտքի նախագծման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

*[Handwritten signature]*

*[Handwritten signature]*

*[Handwritten signature]*

*[Handwritten signature]*

Ձեռնարկող՝ <<Հայնախագիծ>> ԲԲԸ

Փաստաթղթի տեսակը՝ հիմնադրության փաստաթուղթ



Նախատեսվող ծրագրի մշակման նպատակն է Էջմիածին քաղաքը, որպես համայն հայության հոգևոր և խոշոր զբոսաշրջային կենտրոն աշխարհին հավուր պատշաճի ներկայացնելու նպատակով նախատեսվող կենտրոնական փողոցների վերակառուցում, տարածքների կազմակերպում, օղակաձև տրանսպորտային երթուղու հատվածային վերակառուցում և լրակառուցում, արդիականացում, պատմաճարտարապետական միջավայրի վերականգնում, դեպի եկեղեցիներ տանող փողոցների, ճանապարհների հիմնանորոգում:

Ծրագրի բաղադրիչներն են՝

1. Էջմիածին քաղաքի կենտրոնական հրապարակի վերգետնյա մասի և նրան հարող այգեպուրակային գոտու վերակառուցում, Արարատյան փողոցի վերանորոգում, բարեկարգում;
2. Կենտրոնական փողոցների բարեկարգում, մայթերի ծածկույթների վերակառուցում;
3. Դեպի եկեղեցիներ տանող փողոցների, ճանապարհների և մայթերի հիմնանորոգում;
4. Քաղաքի օղակաձև տրանսպորտային երթուղու հատվածային վերակառուցում և լրակառուցում;
5. Մշակույթի պալատին հարակից գտնվող այգու վերակառուցում;

Ներկայացված գնահատման հաշվետվությունում նախատեսվող աշխատանքները ներկայացված են 5 ենթածրագրերի միջոցով՝

Ենթածրագիր 1: Էջմիածին քաղաքի կենտրոնական հրապարակի վերգետնյա մասի և նրան հարող այգեպուրակային գոտու վերակառուցման նախագծում, Արարատյան փողոցի վերանորոգում, բարեկարգում:

Այս ենթածրագիրը նախատեսում է Կոմիտասի հրապարակի ու նրանից մինչև Նալբանդյան փող. հարակից երթուղիներով համաքաղաքային այգեպուրակի /460 մ. երկարությամբ և 70 մ. լայնությամբ/ և Արարատյան փողոցի /հրապարակից մինչև Կամո փ. 700 մ/, վերակառուցում՝ նախատեսելով շարժում ավտոտրանսպորտի համար, կանաչապատման, բարեկարգման աշխատանքների իրականացում՝ ներգրավելով լուսավորման, սպասարկման, հյուրերի և զբոսաշրջիկների հանգստի, ժամանցի և

համաքաղաքային միջոցառումների անցկացման համար ժամանակակից բոլոր անհրաժեշտ տեխնոլոգիական միջոցները և ենթակառուցվածքները:

Հաշվի առնելով քաղաքի վերակառուցվող մասի անմիջական կապը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքների և կառույցների հետ, սույն ծրագիրը պետք է նպաստի նաև Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր կենտրոնի համազգային ու համապետական գործառույթների և միջոցառումների կազմակերպմանը ևս:

Ճարտարապետաշինարարական, և ինժեներական նախագծերը պետք է ներառեն.

- ✓ տարածքի ընդհանուր հատակագծում գոտիավորմամբ,
- ✓ լուսավորության համակարգի անցկացում /լուսադիոդային լուսատուների օգտագործմամբ/,
- ✓ ռոտման համակարգի անցկացում,
- ✓ անձրևաջրերի հեռացման համակարգի անցկացում
- ✓ ասֆալտի ծածկույթի փոխարինում սալիկներով՝ տարբեր տեսակի և գույներով,
- ✓ կանաչապատ տարածքների հիմնանորոգում, բարեկարգում,
- ✓ ռեկրեացիոն տարածքների ստեղծում՝ համաքաղաքային միջոցառումների, հանրահավաքների, համերգների համար նախատեսված տարածքներ, բացօդյա ցուցահանդեսների, հուշանվերների տոնավաճառի համար նախատեսված տարածքներ, ռեկրեացիոն փոքր տարածքներ և այլն
- ✓ հեծանվային ուղեգծերի նախատեսում
- ✓ կայանատեղի կազմակերպում,
- ✓ նստատեղերի տեղադրում,
- ✓ կոմունիկացիոն վերգետնյա համակարգերի փոխարինում ստորգետնյա տարբերակով,
- ✓ Էջմիածնի պատկերասրահ/ Խ. Տեր-Հարությանի թանգարանի (Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ) վերանորոգում (թանգարանային հավաքածուների անվտանգ պահպանության համար պահոցներում և ցուցադրական տարածքներում անվտանգության, ջերմախոնավային, օդափոխության համակարգեր ներդնում, թանգարանի ջեռուցման համակարգի իրականացում):

Ենթածրագիր 2: Կենտրոնական փողոցների բարեկարգման (լուսավորության համակարգի փոխարինում, ճանապարհների և մայրերի ծածկույթների վերակառուցում, ինժեներական այլ համակարգերի վերակառուցում) նախագծում

Այս ենթածրագիրը նախատեսում է Էջմիածին քաղաքի կենտրոնական առանցքային փողոցների (Մբ. Մ.Մաշտոց փողոց, Մ. Խորենացի փողոց) հիմնանորոգում, վերակառուցում: Տեղամասը ներառում է.

1) Մբ. Մեսրոպ Մաշտոց փողոցը, որի

- երկարությունը կազմում է 2000 մ, / Կոմիտասի անվան հրապարակից մինչև Մաշտոցի N138 շենքը/
- փողոցի /այդ թվում մայրերի/ միջին լայնությունը կազմում է 32 մ
- երթևեկելի մասի միջին լայնությունը կազմում է 12 մ

2) Մովսես Խորենացի փողոցը, որի

- երկարությունը կազմում է 1300 մ, / Կոմիտասի անվան հրապարակից մինչև Տերյան փողոց/
- փողոցի /այդ թվում մայրերի/ միջին լայնությունը կազմում է 22 մ
- երթևեկելի մասի միջին լայնությունը կազմում է 10 մ
- նախատեսել փողոցների տարբեր հատվածներում կառուցված անհարիր տեսքերով բազմաբնակարան շենքերի ու տաղավարային կառույցների ճարտարապետական միջամտություն նվազագույն միջոցներով՝ նպատակա- ուղղված ազգային մշակույթի և արդի զրոսաշրջության համար գրավիչ միջավայրի ձևավորմանը:

Ճարտարապետաշինարարական, և ինժեներական նախագծերը պետք է ներառեն.

- ✓ տարածքի ընդհանուր հատակագծում գոտիավորմամբ,
- ✓ շենքերի առաջին հարկերում գտնվող և առանձին կանգնած առևտրի և հասարակական սպասարկման տարածքների և կառույցների ճակատների ճարտարապետական լուծումների, ցուցափեղկերի, գովազդային վահանակների ձևավորման առաջարկություններ,
- ✓ բազմաբնակարան շենքերի ճակատային հատվածների ճարտարապետական տարրերի արդիականացում,
- ✓ լուսավորության համակարգի անցկացում /լուսադիտողային լուսատուների օգտագործմամբ/,
- ✓ անձրևաջրերի հեռացման համակարգի վերականգնում
- ✓ ճանապարհային ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում նախկին շերտի սղոցումով
- ✓ հեծանվային ուղեգծերի նախատեսում,
- ✓ բազալտե եզրաքարերի և մայթեզրերի փոխարինում նորերով
- ✓ մայթերի ծածկույթի փոխարինում բետոնե սալապատումով,
- ✓ կանաչապատ տարածքների ոռոգման համակարգի փոխարինում,
- ✓ նստարանների տեղադրում,
- ✓ վերգետնյա ինժեներական համակարգերի վերականգնում ընդգետնյա էղանակով
- ✓ ստորգետնյա ինժեներական ցանցերի քայքայված և վնասված հատվածների փոխարինում:
- ✓ Այս ենթածրագրի վերջնականատակն է քաղաք Էջմիածնի կենտրոնական, առանցքային փողոցների հիմնանորոգումը, ինչը հիմք կհանդիսանա քաղաքի զբոսաշրջության կենտրոններին տանող ճանապարհների միացումը գլխավորին:



Ենթածրագիր 3: Դեպի եկեղեցիներ տանող փողոցների, ճանապարհների և մայթերի հիմնանորոգում

Այս ենթածրագիրը նախատեսում է Էջմիածնի քաղաքի կենտրոնական փողոցներից դեպի քաղաքի տարածքում գտնվող եկեղեցիները տանող փողոցների և մայթերի հիմնանորոգում: Տեղամասը ներառում է.

- 1) Դեպի Սբ Շողակաթ վանք տանող Պետրոզավոդսկ փողոցը, որի
  - երկարությունը կազմում է 200 մ, / Մաշտոց փողոցից մինչև Նալբանդյան փողոց/
  - փողոցի /այդ թվում մայթերի/ միջին լայնությունը կազմում է 18 մ
  - երթևեկելի մասի միջին լայնությունը կազմում է 10 մ
- 2) Դեպի Սբ Գայանե վանք տանող Իսի-լե-մուլինտ փողոցը, որի
  - երկարությունը կազմում է 530 մ, / Արարատյան փողոցից մինչև Ներսիսյան լիճ/
  - փողոցի /այդ թվում մայթերի/ միջին լայնությունը կազմում է 20 մ
  - երթևեկելի մասի միջին լայնությունը կազմում է 13 մ
- 3) Դեպի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցի տանող ճանապարհը, որի
  - երկարությունը կազմում է 300 մ, / Կոմիտասի հրապարակից մինչև Նար Դոսի փողոց, այնուհետև միջև Սբ. Աստվածածին/
  - փողոցի /այդ թվում մայթերի/ միջին լայնությունը կազմում է 15 մ
  - երթևեկելի մասի միջին լայնությունը կազմում է 9 մ
- 4) Դեպի Սբ. Հռիփսիմե վանք տանող սբ. Հռիփսիմե փողոցն ու հարակից տարածքը,

որի

- երկարությունը կազմում է շուրջ 1150 մ,
- փողոցի /այդ թվում մայթերի/ միջին լայնությունը կազմում է շուրջ 7մ
- երթևեկելի մասի միջին լայնությունը կազմում է 5մ
- ավտոկայանատեղերի նախատեսում վանքի դիմացն ու հետնամասում, այդ թվում զբոսաշրջային 15 ավտոբուսների կայանման համար,

- ետնամասում գտնվող գերեզմանոցի պարիսպատման լուծումների նախագծում շուրջ 70մ

Ճարտարապետաշինարարական, և ինժեներական նախագծերը պետք է ներառեն.

- ✓ տարածքի ընդհանուր հատակագծում գոտիավորմամբ,
- ✓ լուսավորության համակարգի անցկացում /լուսադիողային լուսատուների օգտագործմամբ/,
- ✓ անձրևաջրերի հեռացման համակարգի վերականգնում
- ✓ ճանապարհային ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում նախկին շերտի սղոցումով
- ✓ հեծանվային ուղեգծերի նախատեսում
- ✓ բազալտե եզրաքարերի և մայթեզրերի փոխարինում նորերով
- ✓ մայթերի ծածկույթի փոխարինում բետոնե սալապատումով,
- ✓ կանաչապատ տարածքների ռոտզման համակարգի փոխարինում,
- ✓ նստարանների տեղադրում,
- ✓ վերգետնյա կոմունիկացիոն համակարգերի անցկացում ստորգետնյա եղանակով:
- ✓ Այս ենթածրագրի վերջնականատակն է Էջմիածնի զբոսաշրջության կենտրոնների տանող ճանապարհների հիմնանորոգումն է, բարեկարգումը, ինչպես նաև ավտոկայանատեղի նախատեսում:

Ենթածրագիր 4: Քաղաքի օղակաձև տրանսպորտային երթուղու հատվածային վերակառուցման և լրակառուցման նախագծում

Այս ենթածրագիրը նախատեսում է մասնակիորեն վերակառուցել /Լայրանդյան փողոցը մինչև քաղաքապետարանի դիմացի այգեպուրակը, 1460 մ./ և լրակառուցել քաղաքի կենտրոնի գլխավոր հատակագծով նախանշված շրջանցիկ տրանսպորտային երթուղու հարավ արևմտյան հատվածը /1800 մ./՝ քաղաքի կենտրոնական հատվածը համաքաղաքային, համապետական և հոգևոր միջոցառումների ժամանակ տրանսպորտային տարանցիկ երթևեկությունից բեռնաթափելու նպատակով:

Ճարտարապետաշինարարական, և ինժեներական նախագծերը պետք է ներառեն.

- ✓ տարածքի ընդհանուր հատակագծում գոտիավորմամբ լուսավորության համակարգի անցկացում /լուսադիողային լուսատուների օգտագործմամբ/,
- ✓ անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում
- ✓ ճանապարհային ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում
- ✓ մայթերի նախագծում,
- ✓ կանաչապատ տարածքների և դրանց ռոտզման համակարգի նախագծում,
- ✓ նստարանների տեղադրում,
- ✓ վերգետնյա կոմունիկացիոն համակարգերի անցկացում ստորգետնյա եղանակով:
- ✓ հեծանվային ուղեգծերի նախատեսում
- ✓ լուսավորության համակարգի անցկացում /լուսադիողային լուսատուների օգտագործմամբ/:

Ենթածրագիր 5: Մշակույթի պալատին հարակից գտնվող այգու վերակառուցում

Այս ենթածրագիրը նախատեսում է Մ. Մաշտոց փողոցում գտնվող Մշակույթի պալատին հարակից գտնվող այգու հիմնանորոգում: Այգու ընդհանուր տարածքը կազմում է 7700 մ<sup>2</sup>: Այգու տարածքում է գտնվում Վանա լճի ճիշտ ուրվագծով կառուցված արհեստական լիճը-ջրավազանը: Այգին Խորհրդային տարիներին եղել է բնակչության սիրված վայրերից մեկը: Վերանորոգումից հետո զբոսայգին կարող է ծառայել որպես միջոցառումների կազմակերպման բացօդային վայր:

Հնշվի առնելով Էջմիածնի քաղաքապետի առաջարկությունները, համայնքի կողմից այս տարածքում կատարված աշխատանքները և նախատեսվող ծրագրերը, նախագծի հաջորդ փուլում նախագծային լուծումները կենտրոնացնել ջրավազանի վերակառուցման, ժամանակավոր բեմ ստեղծելու, ձմռանը ձրավազանում սառցադաշտ կազմակերպելու միջոցառումների, ինչպես նաև Մշակույթի տան առջևի հրապարակի արդիականացման վրա:

Բարեկարգման աշխատանքների ցանկում առանձնացնել այն միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն պեղումների ավարտից հետո:

Ճարտարապետական և ինժեներական նախագծերը պետք է ներառեն.

- ✓ տարածքի ընդհանուր հատակագծում գոտիավորմամբ,
- ✓ Լուսավորության անցկացում,
- ✓ Կանաչապատ տարածքների ոռոգում
- ✓ այգու ներքին ճանապարհների սալահատակի պատրաստում,
- ✓ զբոսայգու և մշակույթի պալատի միջև ճանապարհի և ավտոկայանատեղի աաֆալտապատում,
- ✓ նստարանների տեղադրում,
- ✓ ջրավազանի վերանորոգում, շատրվանների տեղադրում,
- ✓ զբոսայգու մուտքերի և եզրապատերի վերանորոգում,
- ✓ զբոսայգու սահմանագծով մայթերի վերանորոգում,
- ✓ հասարակական գույքարանների կառուցում:

Ծրագրի իրականացման շինարարական աշխատանքների հետևանքով հավանական վնասները հետևյալն են՝

- ✓ բուսականության մասնակի ոչնչացում շինարարական գոտում, որի հետևանքով նաև տեսակային կազմի աղքատացում;
- ✓ տարածքի աղտոտում շինաղբով:

Անմիջական ազդեցությունը սահմանափակվում է շինարարական գոտիով:

Շինարարության տակ հատկացված տարածքում կենդանիների բներ, միգրացիոն ճանապարհներ չեն հայտնաբերվել: Ազդեցությունը բուսական և կենդանական աշխարհի վրա կլինի նվազագույն և կկրի ժամանակավոր բնույթ:

Ներկայացված գնահատման հաշվետվության համաձայն մթնոլորտային օդի աղտոտվածության ցուցանիշներից հետևում է, որ օդի աղտոտվածության չափորոշիչները նորմայից ցածր են: Տարածքում պահպանվում է նորմալ էկոլոգիական վիճակ, որևէ ազդեցություն բուսական և ջրային էկոհամակարգերի վրա մթնոլորտային արտանետումներից չի սպասվում:

Օդային ավազանը աղտոտող վնասակար արտանետումների նվազեցման համար նախատեսված են՝

- ✓ փոշու արտանետումների նվազեցման համար կատարվում է տարածքի ջրցանում, ինչը 40-50%-ով նվազեցնում է փոշու արտանետումները:
- ✓ շինարարական հրապարակը ցանկապատվում է ցելոֆանե ծածկույթով, ինչը կանխարգելում է փոշու տարածմանը և նպաստում փոշու նստեցմանը:
- ✓ տեխնիկայի պարկի համալրումը վնասակար նյութերի նվազագույն տեսակարար արտանետումներ (ազոտի օքսիդներ, ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ) ապահովող շինարարական մեքենաներով;
- ✓ շինարարական տեխնիկայի շարժիչների կարգավորում:

Բացի նշված միջոցառումներից, շինհրապարակից դուրս շինարարության ընթացքում, փոշու տարածման կանխարգելման համար նախատեսված է շինարարական աղբի տեղափոխում անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով:

Լիցքերը ամբողջապես կառուցվելու են հանույթներից առաջացած գրունտերով: Գրունտերի ավելացած մասը օգտագործվելու է տարածքի բարեկարգման համար:

Աղմուկի էկվիվալենտ մակարդակի նորման բնակելի գոտու սահմաններում կազմում է 60-70 դԲԱ, իսկ բնակելի շինությունում՝ 40-50 դԲԱ, հետևաբար աղմուկի մակարդակը էջմիածին քաղաքում շինարարական աշխատանքների ժամանակ կլինի նորմերի սահմաններում:

Առաջացած թափոնները հիմնականում դասվում են վտանգավորության 4-րդ դասին: Միայն շինարարական աղբն է տեղափոխվում 7 կմ հեռավորության վրա գտնվող վայր, մնացած թափոնները ենթակա են օգտագործման:

Շրջակա միջավայրի վրա անբարենպաստ ազդեցությունները փոքրածավալ են, կարճաժամկետ:

Օրագրի իրականացման գործընթացում ջուրն օգտագործվում է՝

- ծրագիրն իրականացնող բրիգադի կոմունալ-կենցաղային կարիքների;
- խճի փոման գործընթացում, ջրցանման;
- բետոնի խնամքի համար;
- փոշու արտանետումների նվազեցման նպատակով շինարարական հրապարակի ջրցանման գործընթացներում:

Շինարարության համար անհրաժեշտ ջուրը վերցվում է Էջմիածին քաղաքի խմելու-տնտեսական ջրամատակարարման ցանցից:

Տնտեսա-կենցաղային հոսքաջրերի արտահոսքը իրականացվում է Էջմիածին քաղաքի տնտեսա-կենցաղային կոյուղու ցանց, իսկ շինարարության ժամանակ հանված հողի բուսական շերտը քանակով կուտակվում է 2մ հեռավորության վրա և օգտագործվում է այգու բարեկարգման համար:

Էջմիածնի համայնքապետարանում տեղի են ունեցել <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված հանրային քննարկումները, որոնց ընթացքում հնչած առաջարկությունները հաշվի են առնվել նախագծի լրամշակումների ընթացքում և հանրության կողմից հավանություն է արժանացել: Հատակագծում լուծված են կեղտաջրերի մաքրման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի նվազեցման և կանաչապատման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Ընդհանուր առմամբ նախատեսված միջոցառումների արդյունքում Էջմիածին համայնքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջ

Հիմնադրությային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայնախագիծ>> ԲԲԸ-ի կողմից ներկայացված էջմիածին քաղաքը, որպես համայն հայության հոգևոր և խոշոր զբոսաշրջային կենտրոն աշխարհին հավուր պատշաճի ներկայացնելու նպատակով նախատեսվող կենտրոնական փողոցների վերակառուցման, տարածքների կազմակերպման, օդակա տրանսպորտային երթուղու հատվածային վերակառուցման և լրակառուցման, արդիականացման, պատմաճարտարապետական միջավայրի վերականգնման, ղեպի եկեղեցիներ տանող փողոցների, ճանապարհների հիմնանորոգման, քաղաք Էջմիածնի մուտքի նախագծման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ

Զ. Զուռնայան